

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ ՕԳՈՍՏԱՓԸՌ ԿԱՅՍԵՐ ԹԱԳԱԴՐՈՒԹԵԱՆ ԱՌԹԻԻ.

ՊԱՏԱՍԽԱՆԻ ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՄԻԹԵԱՆ ԷԶՄԻԱԾԻՆ

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԲ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ.

Կայսրուհին և ես շնորհ ունիմք զՁէնջ սրտագինս՝
յաղագս աղօթից Ձերոց և բարեմաղթուածեանց:

Նիկիայ:

ՇՆՈՐՀԱՆՈՐԱԿԱՆ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒՔԵԱՆ ՎԵՀ. ՀԱՅՐԱՊԵՏԻ. ՊԵՏԵՐՐՈՒՐԳ

ՆՈՐԻՆ ՄԵԾՄԻԹԵԱՆ ԹԱԳԱԴՐ ԿԱՅՍԵՐ.

Ի Մեծահանդէս աւուրս տարեղարձի Սրբազան թագա-
դրութեան Ձերդ Կայսերական Մեծութեան և Ամենաբարե-
պաշտ Թագուհւոյ, համայն միաբանական ուխտիւ ի Մայր
Տաճարիս առաջի Ս. Սեղանոյ իջման Միածնի, վերառաքեցի
զաղօթս ջերմագինս յաղագս քաջողջութեան և երկարակե-
ցութեան Ձերդ Մեծութեան: Երկարեսցէ, Տէր զաւուրս Ձեր
ի փառս և յերջանկութիւն Մեծին Ռուսիոյ:

Մկրտիչ Կաթողիկոս ամենայն Հայոց:

ՔԱՂՈՒԱԾԲ Ի ԿՈՆԴԱԿԱՅ ՎԵՀ. ՀԱՅՐԱՊԵՏԻ.

Հայրապետական Տնօրէնութիւնը:

Կոնդակ յանուն Թեմակ. Ատրպատականի Տ. Ծղիշէ Ժ.
վարդապետի, որով արտօնեցաւ՝ թոյլատրել Գրիգորի Յովհան-
նիսեան Հախվերան գեղջ Սալմաստայ մօտանել յերկրորդ ա-
մուսնութիւն. թ. 24:

— Յանուէն Գեր. թեմ. Առաջնորդին Արցախայ Տ. Գրիգոր Եպսկի, յաղագս կարգելոյ զՏ. Թադէոս վարդապետն Տ. Նիկողայոսեան ի վանահայր Վանուցն Ճալեթայ. թ. 88:

— Յանուէն մնայուն Յանձնաժողովոյ Ղուկասեան կրօնական—պատմական թանգարանին վանաց Մայր եկեղեցւոյ Տփիսեաց, որով և հաստատեցան կանոնք վասն Գրական մրցանակաբաշխութեան նորին. թ. 101:

— Յանուէն Վիճ. Ատենին Երեւանայ, որով լուծեալ համարեցաւ պսակն Կարնեցի Սերովբէի Խաչատրեան ընդ վախուցեալ կնոջ նորա՝ արտօնելով առնն զվերստին ամուսնութիւն. թ. 127:

— Յանուէն Տ. Արրահամ վարդ. Ռշտունւոյ, որով կարգեցաւ ի վանահայր վանուցն Հաղարծնի և ի գործակալ շրջակայ չորից գիւղօրէիցն. թ. 148:

— Յանուէն վանահօր Դարաշամբայ Տ. Տրիփոն վարդ., առ ի զրկել ի հաղորդութենէ ս. Եկեղեցւոյ զՅակօրջան Մարգարեան Դարաշամբեցի, որոյ տուեալ էր սպանանել զկին իւր ընդ ձեռն այլաղգւոյ. թ. 436:

— Յանուէն Սինօղի ս. Էջմիածնի, յաղագս բացակայելոյ երկամեայ ժամանակաւ անգամոյ նորին Գեր. Յուսիկ եպիսկոպոսի. թ. 458:

— Յանուէն Հոգ. Կառավարութեան Ազէքսանդրապոլի, որով հրամայեցաւ տալ հինգ բուբլի ամսաթոշակ ի նպաստայրւոյն Սիմէօնի Մանուկեան՝ բաղմամեայ սուրհանգակի կառավարութեան տեղւոյն. թ. 465:

— Յանուէն Վիճ. Կոնսիստ. Արցախայ, յաղագս քննելոյ զգործս Սիմէօն քահ. Տ. Պօղոսեան Նուխեցւոյ. թ. 491:

— Յանուէն Վիճ. Ատենին Շամախուոյ, որով յայտնեցաւ թէ Տ. Տաճատ աւագ քահ. ունի մնալ ի Շամախի պաշտամամբ անգամութեան կոնսիստորիային. թ. 492:

— Յանուէն անգամոյ Քաղաք. Ժողովոյ Վան քաղաքի, յաղագս կառուցման նորոյ տաճարի Յայնկոյսներ եկեղեցւոյ ի վերայ հիմանց հնոյն. թ. 499:

— Յանուէն Սինօղի ս. Էջմիածնի, յաղագս վաւերական համարելոյ զպսակն Նոր Նախիջևանցի Նուսիայի Զուպար-

եանց ընդ առն նորա Անտոնի, որ կաաարեալ է յամին 1886. թ. 517:

— Յանուէն Թեմակային Ատրպատականի Տ. Եղիշէ Տ. վարդապետի, որով լուծեալ համարեցաւ պսակն Սողոմոնի Այվազեանց ընդ կնոջ նորա Սայրիի, զրկմամբ առն յիրաւանց վերստին ամուսնութեան. թ. 549:

— Յանուէն Վիճ. Ատենին Վրաստանի և Իմերեթի, որով պատուիրեցաւ Թողուլ ընդ տեսչութեամբ վանահօր Սանահնոյ զպաղի արդիւնս դաւառին Լոռոյ. թ. 554:

— Յանուէն Սինօղի ս. Էջմիածնի, որով պատուիրեցաւ նշանակել 1200 բուբլի ի ծախս հետազօտման կալուածոց Մայր Աթոռոյ ընդ ձեռն երկուց մասնազիտաց. թ. 558:

— Յանուէն Անդամոյ Սինօղի Տ. Աշոտ վարդ.ի, որով պատուիրեցաւ քննել զվէճն վանահօր Մոյնոյ վանից և քահանայի տեղոյն. թ. 578:

— Յանուէն Սինօղի Ս. Էջմիածնի, որով պատուիրեցաւ ընդունել զՄկրտիչն Մուրադեան Ղալթաղչեցին ի հոգեոր կոչումն կրօնաւորութեան, առ ի լինել միաբան վանուցն Հառիճոյ. թ. 586:

— Յանուէն Տ. Գիւտ. ա. քահ.ի Աղանեան, որով պատուիրեցաւ քննել զգործ պսակալութեան Տփլիսեցի Յովսէփայ Դանդուբեան ընդ կնոջ նորա Մարիամու. թ. 592:

— Յանուէն Վիճ. Ատենին Վրաստանի և Իմերեթի, յաղագս տալոյ քննել զբողոքն Ժողովրդեան Արճէշ գեղջ զՍահակ քահանայի իւրեանց. թ. 605:

— Յանուէն Ամեն. Պատրիարքին հայոց Թուրքիոյ Տ. Մաղաքեայ Արքեպիսկոպոսի, որով պատուիրեցաւ Ժողովել և վերադարձուցանել ի Մայր Աթոռս զխաչս և զպանակէս հանգուցեալ Կաթիկոպոսաց ի սահմանս Թուրքիոյ. թ. 617:

— Յանուէն Սինօղի ս. Էջմիածնի, որով տուաւ հրահանգութիւն վասն գաղթական քահանայից. թ. 634:

— Յանուէն Վիճ. Ատենին Վրաստանի և Իմերեթի, յաղագս քննելոյ զվէճս և զարարս ոմանց քահանայից Գօրի քաղաքի. թ. 647:

— Յանուէն նոյն Վիճ. Ատենին, յաղագս արդելոյ շրբ-

Ջարերականաւ գփոխադրութիւն քաջանայից ի տեղւոջէ յայլ տեղի. թ. 665:

— Յանուէն Ամեն. Պատրիարքին Թուրքիոյ Տ. Մաղաքեայ Արքեպս.ի, որով լուծեալ համարի պսակն Զմիւռնիացի Մուշեղայ Քէշիշեան ընդ կնոջ նորա եղիսաբեթի, զրկմամբ առնն յիրաւանց վերստին ամուսնութեան. թ. 680:

— Յանուէն Տ. Մատթէոս վարդապետի, որով կարգի ի ժամանակաւոր տեսուչ Տպարանի Մ. Աթոռոյ. թ. 688:

— Յանուէն Տ. Բարդէն վարդ.ի, որով կարգի ի փոխանորդ վիճակին Ախալցխայի. թ. 689:

— Վկայական յանուէն Գեր. Տ. Արիստակէս եպս.ի Վանքեան, Առաջնորդին Ամասիոյ և Մարզուանու, վասն եպիսկոպոսութեան. թ. 708:

— Ընդհանրական յանուէն Ժողովրդեան Ամասիոյ և Մարզուանու, որով յայտնեցաւ զձեռնադրութենէ Առաջնորդին իւրեանց յաստիճան եպիսկոպոսութեան. թ. 709:

— Յանուէն Գեր. Տ. Բարդուղիմէոս Արքեպիսկոպոսի Զամէեան զձեռնադրութենէ ձեռնասուէն սանու նորա Տ. Արիստակիսի յեպիսկոպոս. թ. 710:

— Վկայական յանուէն Գեր. Տ. Սահակ եպս.ի Բաղրեանդեան Առաջն. Տեղապահի Վանայ, վասն եպիսկոպոսութեան. թ. 717:

— Ընդհանրական յանուէն Ժողովրդեան Վասպուրականի, վասն ձեռնադրութեան Տ. Սահակ եպիսկոպոսի. թ. 718:

— Յանուէն Ամեն. Պատրիարքին Թուրքիոյ Տ. Մաղաքեայ Արքեպս.ի, որով ծանուցաւ ձեռնադրութիւն Տ. Արիստակէս և Տ. Սահակ Ժ. վարդապետաց յաստիճան եպիսկոպոսութեան. թ. 720:

— Յանուէն Յանձնաժողովոյ Ղուկասեան Կրօնական — Պատմական Թանգարանին վանաց աւագ եկեղեցւոյ Տփխեաց, որով նշանակեցան յանդամս յանձնաժողովոյ Թ. Պ. Նիկողայոս Ն. Յարութեան և պ. Իսահակ Յարութիւնեան. թ. 728:

— Յանուէն վիճ. Ատենին Վրաստանի, որով թոյլատրեցաւ Գէորգայ Աթոյեան Տփխիսեցւոյ մտանել ինոր ամուսնութիւն. թ. 731:

— Յանուեն Վանական Կառավարութեան Մ. Աթոռոյ, որով պատուիրեցաւ յանձնել զվանս Շողակաթի Տ. Յովհաննէս վարդ.՝ի Աշտարակեցոյ. թ. 750:

— Յանուեն անդամոց Եկեղեցական խորհրդոյ Ս. Պետերբուրգի, յաղագս որոշելոյ թոշակ ինչ յեկամաից եկեղեցւոյն վասն ուսանողի բժշկութեան Հայկայ Կանայեան. թ. 765:

— Յանուեն Հոգ. Կառավարութեան Կարուց, որով լուծեալ համարեցաւ պսակն տաճկահայտակ Յովհաննիսի Խնկոյեան ընդ կնոջ նորա Աղաւնւոյ, տալով իրաւունս կնոջն մտանել ի նոր ամուսնութիւն. թ. 780:

Հայրապետական պարգևք.

Շնորհեցաւ կոչումն Արքեպիսկոպոսական երկուց աւագոյն միաբանից Առաքելական Աթոռոյն Երուսաղեմի՝ Գերաշնորհ եպիսկոպոսաց Տ. Ներսիսի Գէորգեան, Պատրիարքական փոխանորդի Ս. Երուսաղեմի, և Տ. Սահակայ Խապայեան, Աւագ Լուսարարի Ս. Յակովբեանց Տաճարին:

Շնորհեցան եպիսկոպոսական պանակէք երկուց նորապսակ եպիսկոպոսաց Տ. Սահակայ Բագրևանդեան և Տ. Արիստակիսի Վանքեան:

Շնորհեցան վարդապետական ականակուռ լանջախաչք չորից միաբանից Ս. Երուսաղեմի—Տ. Թադէոս վարդ.՝ի Աստուածատրեանց, Տ. Եղիշէ վարդ.՝ի Զիլինգարեան, Տ. Դանիէլ վարդ.՝ի Յակոբեան և Տ. Անանիա վարդ.՝ի Հաղարապետեան. վեց միաբանից Արմաշեան ուխտին՝ Տ. Զաւէն, Տ. Բարգէն, Տ. Խոսրով, Տ. Սմբատ, Տ. Մուշեղ և Տ. Աղան վարդապետաց. երկուց միաբանից Մայր Աթոռոյ՝ Տ. Իսահակ վարդ.՝ի Տ. Միքայէլեան և Տ. Եղիշէ վարդ.՝ի Ա. հարօնեան. միոյ միաբանի Աթոռոյն Կիլիկիոյ, Տ. Խորէն վարդապետի Դիմաքսեան. երկուց միաբանից Աթոռոյն Աթմարայ՝ Տ.

Դանիէլ վարդապետի Զատոյեան և Տ. Եղնիկ վարդապետի Ներկարարեան, և աւագերիցու եկեղեցւոյն Հայոց Մոսկուայի Տ. Յարութիւն ա. քահանայի Պապովեան:

Շնորհեցաւ սև ծաղկեայ փիլոն երից միարանից Մայր Աթոռոյ՝ Տ. Կոմիտաս վարդապետի Գէորգեան, Տ. Խորէն վարդապետի Մուրառ—Եէգեան և Տ. Ընձակ վարդապետի Եաղձեան:

Շնորհեցաւ պատիւ աւագ քահանայութեան Տ. Յակոբ քահանայի Պետրոսեան Ն. Բայազիդ քաղաքի և Տ. Մեսրոպ քահանայի Մելեան Բաթում քաղաքի:

Շնորհեցան իրաւունք կրելոյ ղկամիլաւկայ Տ. Պետրոս քահանայի Մաննիշեան, Տ. Յովհաննէս քահանայի Տ. Գրիգորեան, Տ. Մինաս քահանայի Վարդապետեան և Տ. Ստեփան քահանայի Աղիլարեան:

Շնորհեցան իրաւունք կրելոյ զքահանայական լանջախաչս՝ Տ. Գէորգ քահանային Դիլիջանի, Տ. Սահակայ Յամաքաբերդի, Տ. Աաղաթիւի Կարմիր վանք գեղջ, Տ. Խաչատրոյ Աղքիլիսա գեղջ, Տ. Գալստի Տիկոռ գեղջ, Տ. Վարդանայ Օլթի աւանի, Տ. Արշակայ Նուսի քաղաքի, Տ. Յարութիւնի Շուշուոյ, Տ. Յակոբայ Մանգլիսի, Տ. Դաւթի Ալ գեղջ, Տ. Գրիգորի Թուխ գեղջ, Տ. Յովսէփայ Գործակալին Շամշաանոյ, Տ. Գէորգայ Վերայի Տփլեաց, Տ. Ներսիսի Փիրվերդեան, Տ. Վահանայ Քիլուարի գեղջ և Տ. Աւետիսի Գործակալին Ապարանայ:

Հայրապետական օրհնութիւնք եւ շնորհակալիք.

Կոնդակ օրհնութեան և գոհունակութեան յանուն ժողովրդեան Տփլիս քաղաքի, յաղագս մասնակցութեան ի գործ շնորոգութեան Վանաց Մայր եկեղեցւոյ. թ. 60:

— Օրհնութեան և գոհունակութեան յանուն Գերազնիւ պ. Աղէքսանդրի Յովհաննիսեան Մանթաշեանց, յաղագս առատաձեռն օժանդակութեան նորա ծախուց նորոգութեան ներքին մասանց վանաց Մայր եկեղեցւոյ. թ. 61:

— Օրհնութեան և գոհունակութեան յանուն Մեծ. պարոնայ Գաբրիէլի Զաքարեան Գեօղալեանց և Գէորգայ Մարտիրոսեան Յակոբեանց Տփիսիսեցւոց, յաղագս օժանդակութեան նոցին ծախուց նորոգութեան վանուցն Թէլեթի. թ. թ. 69, 70:

— Օրհնութեան և գոհունակութեան յանուն նկարիչ պ. Սովոնայ Պէղիրճեան ի Փարիզ. թ. 165:

— Օրհնութեան և գոհունակութեան յանուն այրի Տիկին Ոսկիի Միքայէլեան Թիւնիթեանց Շուշեցւոյ, վասն նուիրարեւութեան նորա հին զրամոց ի թանգարան Մայր Աթոռոյ, ի գին մի հազար բութլեաց. թ. 168:

— Օրհնութեան և գոհունակութեան յանուն Մեծ. պ. Միքայէլի Արզումանեան Բագուեցւոյ, վասն նուիրելոյ զառնն իւր ի սեփականութիւն Մայր Աթոռոյ ս. Էջմիածնի. թ. 459:

— Օրհնութեան և գոհունակութեան յանուն Հոգաբարձութեան ս. Փրկչեան Ազգ. հիւանդանոցին Կ. Պօլսոյ. թ. 498:

— Օրհնութեան և գոհունակութեան յանուն Գերազնիւ եղբարց Թորոսեանց Արմաւիրցւոց Աղէքսանդրի և Միքայէլի, յաղագս նուիրելոյ 500 բութլիս. թ. 501:

— Օրհնութեան յանուն պ. Ղազարոսի Աղայեանց, առ հանգէս յօբելինի քառասնամեայ գրական և մանկավարժական գործունէութեան նորին. թ. 612:

— Օրհնութեան և գոհունակութեան յանուն Մարեշալ Մարտիրոս Խանի Դաւիթ Խանեանց Թեհրանցւոյ, յաղագս կտակին զոր արար. թ. 613:

— Օրհնութեան և գոհունակութեան յանուն ուսուցչապետ պ. Գրիգորի Խալաթեանց, յաղագս յղելոյն զթուղթս հանգուցեալ Տ. Գաբրիէլ Պատկանեանի. թ. 624:

— Օրհնութեան և գոհունակութեան յանուն Մեծ. պ.

Նիկողայոսի Զաքարեան Նարինանեանց, երեցփոխանի եկեղեցւոյն Կոջորի վասն ազգօգուտ և ժրաջան պաշտօնավարութեան նորին. թ. 644:

— Օրհնութեան և գոհունակութեան յանուն Մեծ. պ. Ստեփաննոսի Կարապետեան Հին Նախիջևանցւոյ, յաղագս վաստակոց նորա ի գործ նուիրաբերութեան երկուց եկեղեցեաց տեղւոյն. թ. 651:

— Օրհնութեան և գոհունակութեան յանուն Գենեբալ Լէյտենանտ Իսմայիլ խանի Նախիջևանսկոյ, յաղագս նուիրաբերութեան նորա երկուց սեփական դետնոց ի տիրապետութիւն ս. Գէորգ և ս. Երրորդութիւն եկեղեցեաց Նախիջևան քաղաքի. թ. 652:



ՈՂԲԱՅՈՂ ԶԻՆՈՒՈՐԻ ԿԵԱՆՔ

Արեան դաշտէն ձայն արկանեմ,
Ո՛վ անձկալիդ իմ Հայրենիք,
Ընտանիք իմ և սիրելիք,
Զինուորիս սղբ մըտիկ արէք:
Ես զինուոր եմ՝ Ղարապաղցի,
Այն քաջ արանց Հայրենիքէն,
Եւ տոհմական տան շառաւիղ.
Ունիմ ուսումնս և կրթութիւն
Զինուորական ասպարիզին,
Քաջ քաջ կռուել դէմ թշնամւոյն,
Եղբայր եղբօր թափել արիւն:
Հրաման առի անակնկալ,
Երթալ ի կռիւ արեան դաշտ,
Հասաւ ինձ ո՛հ ժամ՝ դառնագին,
Որ ես թողում իմ Հայրենիք
Եւ ընտանիք և սիրելիք:

Մնաք բարով հայր իմ և մայր,
Իմ անձկալի քորք և եղբարք,